

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԿԱՊԱԼԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2021/19Շ

ք. Երևան

« 08 » « 08 » 2021 թ.

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար Հ. Բատիկյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Բաղայանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված **Մ-3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Տաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության ավտոճանապարհի կմ154+000-կմ176+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքները** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները կատարվում են ՀՀ օրենսդրությամբ սահմանված ստանդարտներին, շինարարական նորմերին և կանոններին, աշխատանքի նախագծին, ինչպես նաև պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ համաձայն օրացուցային գրաֆիկի (Հավելված N 2):

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):

2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի ուժերով, նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը:

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները:

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխալային ժամկետում:

3.1.6 Լիզագրել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով:

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

3.2. Պատվիրատուն պարտավոր է՝

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները:

3.3. Կապալառու իրավունք ունի՝

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

3.4. Կապալառու պարտավոր է՝

3.4.1 Աշխատանքների առավելագույն 100 տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր ուժերով, գործիքներով, մեխանիզմներով, ինչպես նաև անհրաժեշտ նյութերով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել շինմոնտաժային աշխատանքների կատարումը շինարարական նորմերին, կանոններին ու տեխնիկական պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված սարքավորման (էլեկտրական, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխիչ և այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառու պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված **3 (երեք) տարին**: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառու պարտավոր է իր հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3.4.12 Պայմանագիրը կատարելու ժամանակ, պայմանագրի գնի ավելի քան 50 տոկոսը՝ հանրագումարային ձևով, ուղղել հայաստանյան ծագում ունեցող աշխատանքային և (կամ) արտադրական ռեսուրսների օգտագործման միջոցով պայմանագրի կատարմանը, օգտագործելով սույն պայմանագրի հավելված N 1.1 ու սահմանված ռեսուրսները:

3.4.13 Պայմանագրի կատարման շրջանակում յուրաքանչյուր փուլի հանձնման-ընդունման արձանագրության հետ մեկտեղ պատվիրատուին ներկայացնել տվյալ փուլի կատարումն ապահովելու նպատակով օգտագործված հայաստանյան ծագում ունեցող արտադրական ռեսուրսների ծագման երկրի սերտիֆիկատների և ռեսուրսների ձեռքբերման հաշիվ-ապրանքագրերի, ինչպես նաև իր կողմից հաստատված տեղեկանքի պատճենները՝ համապատասխան թվով աշխատողներին վճարված գումարների մասին, նշելով ըստ աշխատողների վճարված գումարների չափերը և վերջիններիս հանրային ծառայության համարանիշները:

4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **18 աշխատանքային օրվա ընթացքում** ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված հանձնաժողով ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար:

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի (այսուհետ՝ ընդունող հանձնաժողով) կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում:

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ:

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

- ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,
- բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.
- 5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարածամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **3 645 000 000 (երեք միլիարդ վեց հարյուր քառասունհինգ միլիոն) ՀՀ դրամ՝ որից 607 500 000 (վեց հարյուր յոթ միլիոն հինգ հարյուր հազար) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն:** Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

5.4 Սույն պայմանագրի 3.4.12 և 3.4.13 կետերով սահմանված պայմանների կիրառման դեպքում, եթե ներկայացված տեղեկատվությունը գնահատվում է սահմանված պահանջներին համապատասխանող, ապա ՀՀ կառավարության 01.04.2021թ. թիվ 442-Ն որոշմամբ սահմանված կարգով և պայմաններով կապալառուին փոխհատուցվում է պայմանագրի գնի 1 տոկոսը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասներորդական) տոկոսի չափով:³¹ Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱՃՂԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱՔՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության

³¹ Եթե պայմանագիրը կնքվել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի հիման վրա, ապա տուգանքը հաշվարկվում է այն համաձայնագրի գնի նկատմամբ, որի շրջանակում արձանագրվել է սրանսնված պարտավորությունների չկատարման կամ ոչ պարզաճ կատարման հանգամանքը:

հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառու ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք

բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Սույն պայմանագիրը կազմված է 6 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 1.1, N 2, N 3, N 4 և N 4.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:


8.13 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քսանհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները՝ նախատեսված ֆինանսական միջոցների չափով, փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 17-րդ ենթակետի «բ» պարբերության պահանջները: Ընդ որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից ստանհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

**9. ԳՈՐԿԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ
ՊԱՏՎԱՐԱՏՈՒ
ՎԱՊԱԼԱՌՈՒ**


ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների նախարարություն
ՀՀ ք.Երևան, Կառավարական տուն 3,
ՀՀ կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900011025823
ՀՎՀՀ 02815457

գլխավոր քարտուղար

Հ. Բառիկյան



«Լեոպոլդ և ընկերներ» ՍՊԸ
ՀՀ, Երևան, 0037, Արաբկիր 39/1ա
«Արդշինբանկ» ՓԲԸ
ՀՀ 2470074677530000
ՀՎՀՀ 00106947
Տնօրեն
Ա. Բաղայան



Անհրաժեշտության դեպքում պայմանագրի նախագծում կարող են ներառվել ՀՀ օրենսդրության համապատասխանություններ:

Հավելված թիվ 1
 « 02 » « 08 » 2021 թ. կնքված
 ՏԿԵՆ-ՀՐՄԱՇՁԲ-2021/19Ը ծածկագրով պայմանագրի

ԳՆՄԱՆ ԱՌԱՐԿԱՅԻ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ
 ՉԱՓԱԲԱԺԻՆ 1

ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ

Մ- 3, Թուրքիայի սահման-Մարգարա-Վանաձոր-Sաշիր-Վրաստանի սահման միջպետական նշանակության
 ավտոճանապարհի կմ154+000-կմ176+900 հատվածի հիմնանորոգման աշխատանքների

« Հրամ

NN	Աշխատանքների անվանումը	Չափ. միավ.	Ծավալը	Միավորի արժեքը	Ընդամենը արժեքը
1	2	3	4	5	6
1	Հողային աշխատանքներ				
1	9ձ-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ. Ծածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ ³	1245.9	7150	8,908,185.00
2	Նախօրոք փխրեցված 9ձ-V կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. շեռ.	մ ³	2370.2	2000	4,740,400.00
3	Նախօրոք փխրեցված 9ձ-V կարգի բնահողի մշակում բուլղ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 1.0մ ³ շ.տ. և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. շեռ.	մ ³	1246	2510	3,127,460.00
4	Նախօրոք փխրեցված 9ձ-V կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	415	9250	3,838,750.00
5	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ ³	24060	1620	38,977,200.00
6	10e-IV կարգի բնահողի մշակում բուլղ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 1.0մ ³ շ.տ. և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	20750	1820	37,765,000.00
7	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	620.29	5600	3,473,624.00
8	10e-IV կարգի բնահողի մշակում բուլղոգերով տեղափոխում 20մ լիցք (հարթում.ջրում). խտացում)	մ ³	12820.44	650	8,333,286.00
9	10e-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում 5.0կմ միջ. հեռ. պահեստավորումով կողնակների լիցքի համար h=21մ	մ ³	1081.82	1300	1,406,366.00
10	Ծածկի քանդում բուլղ հմիջ=15 սմ . տեղափոխում 50 մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 1.0մ ³ շ.տ. և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. շեռ.	մ ² /տ	12230	290	3,546,700.00
11	33r-III կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	12200	1500	18,300,000.00
12	33r-III կարգի բնահողի մշակում բուլղ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձում ա/ի էքս. 1.0մ ³ շ.տ. և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	8300	1750	14,525,000.00
13	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	247.36	3860	954,809.60
	Գրունտի փոխարինում կմ 175+165 - կմ 175+220				
14	33r-III կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	289	1480	427,720.00
15	33r-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	32.8	3860	126,608.00
16	10e-IV կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ ³ շ.տ. ա/ի և տեղափոխում միջինը 1.0 կմ լիցք (հարթում.ջրում). խտացում)	մ ³	200	1420	284,000.00
17	Նախօրոք փխրեցված 9ձ-V կարգի բնահողի բարձում էքս. 1.0մ ³ շ.տ. ա/ի և տեղափոխում միջինը 15.0 կմ լիցք (հարթում.ջրում). խտացում)	մ ³	121.8	2520	306,936.00

Օղակ և թևեր					
19	33բ-III կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	1352	1480	2,000,960.00
20	33բ-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	150.62	3860	581,393.20
21	10բ-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ ³	352	1610	566,720.00
22	10բ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ ³	39.2	5570	218,344.00
մեք. կայանման գրպաններ					
23	33բ-III կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	417	1480	617,160.00
24	33բ-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	46	3860	177,560.00
25	10բ-IV կարգի բնահողի մշակում էքս. 1.0մ ³ շ.տ. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ ³	925	1610	1,489,250.00
26	10բ-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ.	մ ³	103	5570	573,710.00
Ընդամենը I					155,267,141.80
II Կողային առու					
1	9բ-V կարգի բնահողի փխրեցում մանր պայթանցքային լիցերով h<0.5մ Ծածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ ³	5.82	9520	55,406.40
2	Կողային առվի իրականացում նախորոք փխրեցված 9բ-V կարգի բնահողում էքս 0.65մ ³ շ.տ.. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ	մ ³	19.4	2010	38,994.00
3	Կողային առվի իրականացում 10բ-IV կարգի բնահողում էքս 0.65մ ³ շ.տ.. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ մի. շեռ	մ ³	235	1660	390,100.00
4	Կողային առվի մշակում և բարձում ձեռքով 10բ-IV կարգի բնահողում ա/ի վրա.տեղափոխում լցակույտ 10կմ միջ հեռ.	մ ³	26.6	5570	148,162.00
5	Կողային առվի իրականացում 33բ-III բնահողում էքս 0.65մ ³ շ.տ.. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	164	1470	241,080.00
6	Կողային առվի մշակում և բարձում ձեռքով 33բ-III կարգի բնահողում ա/ի վրա.տեղափոխում լցակույտ 10կմ միջ հեռ.	մ ³	18.8	3860	72,568.00
Կողային առվի ամրացում. բետ. սալերով Ե-8 (49x49x8) սմ					
7	Խճային շերտ h=10սմ	մ ²	270	2690	726,300.00
8	Կողային առվի ամրացում. բետ. սալերով Ե-8 (49x49x8) սմ	հատ	1080	2730	2,948,400.00
Ընդամենը II					4,621,010.40
III Երթևեկի մաս					
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ տիպ "Ե"	մ ²	217252.5	3790	823,386,975.00
2	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ ²	217252.5	4160	903,770,400.00
3	Խճավազային հիմք (C-5) h=20սմ խիճ (40-70)մմ - 10% - 2.6մ ³ խիճ (20-40)մմ - 35% - 9.1մ ³ խիճ (10-20)մմ - 20% - 5.2մ ³ խիճ (5-10)մմ - 10% - 2.6մ ³ խիճ (0-5)մմ - 25% - 6.5մ ³ (ավազ) ջուր-1.1մ ³	մ ²	217791.7	1520	331,043,384.00
4	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=15 սմ	մ ²	228571.3	550	125,714,215.00
Օղակ և թևեր					
5	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ տիպ "Ե"	մ ²	3924	3790	14,871,960.00
6	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ ²	3924	4170	16,363,080.00
7	Խճավազային հիմք (C-5) h=20սմ խիճ (40-70)մմ - 10% - 2.6մ ³ խիճ (20-40)մմ - 35% - 9.1մ ³ խիճ (10-20)մմ - 20% - 5.2մ ³ խիճ (5-10)մմ - 10% - 2.6մ ³	մ ²	3924	1550	6,082,200.00

	խիճ (0-5)մմ - 25% - 6.5մ ³ (ավազ) ջուր-1.1մ ³				
8	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=15 սմ	մ ²	3924	560	2,197,440.00
	Մերենաների կայանման գրպաններ				
1	Մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ տիպ "Ե"	մ ²	3241	3790	12,283,390.00
2	Խոշորահատիկ ա/բ h=6սմ	մ ²	3241	4160	13,482,560.00
3	Խճավազային հիմք (C-5) h=20սմ խիճ (40-70)մմ - 10% - 2.6մ ³ խիճ (20-40)մմ - 35% - 9.1մ ³ խիճ (10-20)մմ - 20% - 5.2մ ³ խիճ (5-10)մմ - 10% - 2.6մ ³ խիճ (0-5)մմ - 25% - 6.5մ ³ (ավազ) ջուր-1.1մ ³	մ ²	3241	1520	4,926,320.00
4	Հատիկավոր ենթահիմք (ավազակոպիճ) h=15 սմ Տեխ. անցում Կմ168+833. Կմ174+206 (39.6մ2+63.8մ2)	մ ²	3241	570	1,847,370.00
1	Միաձույլ բետոն B-20 h=20սմ	մ ²	103.4	13000	1,344,200.00
	Ամրանավորում				
	- A500C Ø14mm . - 496.32զծմ / 599.55կգ - A500C Ø10mm . - 387.75զծմ / 238.85կգ				
Ընդամենը III					2,257,313,494.00
IV	Կողակներ				
1	Պահեստավորված 10e-IV կարգի բնահողի բարձունք ա/ի վրա էքս. 1.0մ3 շտ և տեղափոխում կողակների լիցք 5 կմ միջ. շեռավորությամբ h=21սմ (հարթում. ջրում. խտացում)	մ ³	1081.82	1550	1,676,821.00
2	Կողակների իրականացում ավազակոպիճային կյուրով h=10սմ	մ ²	65350	450	29,407,500.00
Ընդամենը IV					31,084,321.00
V	Իջատեղեր և մուտքեր				
1	9ա-V կարգի բնահողի փխրեցում պայթանցքային լիցքերով h<0.5մ Օածկոցներ մետ թիթեղից d=10մմ բեռնավորված բետոնե բլոկներով	մ ³	2.2	7020	15,444.00
2	Նախօրոք փխրեցված 9ա-V կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձունք ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	7.344	8860	65,067.84
3	33բ-III կարգի բնահողի մշակում բուլլ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձունք ա/ի էքս. 1.0մ3 շտ. և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	1956.82	1650	3,228,753.00
4	33բ-III կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձունք ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	210	3710	779,100.00
5	10e-IV կարգի բնահողի մշակում բուլլ. տեղափոխում 50մ կուտակումով. բարձունք ա/ի էքս. 1.0մ3 շտ. և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. շեռ.	մ ³	4090	1570	6,421,300.00
6	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով. բարձունք ա/ի և տեղափոխում լցակույտ 10կմ միջ. հեռ.	մ ³	283.9	5360	1,521,704.00
7	10e-IV կարգի բնահողի մշակում բուլլոզերով տեղափոխում 20մ լիցք (հարթում. ջրում. խտացում)	մ ³	109	620	67,580.00
8	Ե/բ սալերի ապոմոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը H=0.2 սմ 6.0 x 2.2 մ	մ ²	277.2	770	213,444.00
9	Ե տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=4սմ	մ ²	11374.77	3040	34,579,300.80
10	Խճավազային հիմք C-5 h=12սմ խիճ (40-70)- 10% - 1.56մ ³ խիճ (20-40)- 35% - 5.46մ ³ խիճ (10-20)- 20% - 3.12մ ³ խիճ (5-10)- 10% - 1.56մ ³ խիճ (0-5)- ավազ 25% - 3.9մ ³ ջուր-1.1մ ³	մ ²	11374.77	990	11,261,022.30
11	Ե տիպի մանրահատիկ խիտ տաք ա/բ h=5սմ	մ ²	24733.12	3750	92,749,200.00
12	Խճավազային հիմք C-5 h=15սմ խիճ (40-70)- 10% - 1.95մ ³ խիճ (20-40)- 35% - 6.825մ ³ խիճ (10-20)- 20% - 3.9մ ³	մ ²	24733.12	1180	29,185,081.60

	խիճ (5-10)- 10% - 1.95մ3 խիճ (0-5)- ավազ 25% - 4.875մ3 ջուր-1.1մ3				
13	Մետ. խողովակներ Ø 530/7մմ տեղադրում	զծմ	196.7	77550	15,254,085.00
14	Ավազակոպձային շերտ h=10սմ (խողովակի տակ)	մ ³	9.7519	4210	41,055.50
15	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) Ø530մմ	զծմ	182.3	2230	406,529.00
16	Միաձույլ բետոն B-20 գլխամասերի կառուցում	մ ³	19.2	77020	1,478,784.00
17	Գլխամասերի ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) Ø530մմ	մ ²	61.42	920	56,506.40
18	Մետ. խողովակներ Ø 273/5մմ տեղադրում	զծմ	95.4	27140	2,589,156.00
19	Ավազակոպձային շերտ h=10սմ	մ ³	3.37	4210	14,187.70
20	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով) Ø273մմ	զծմ	88.6	1150	101,890.00
21	Խողովակը վաքի հետ միացման միաձույլ բետոն B-20	մ ³	0.68	77020	52,373.60
21	Գոյություն ունեցող խողովակների ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը				
	> ա/գ Ø 0.3մ	զծմ	12	480	5,760.00
	> ա/գ Ø 0.35մ	զծմ	6	730	4,380.00
	> ա/գ Ø 0.45մ	զծմ	5	750	3,750.00
	> մետ. Խող. Ø 0.273մ	զծմ	8.5	780	6,630.00
> մետ. Խող. Ø 0.325մ	զծմ	27	910	24,570.00	
	Տեխ. աւեցում				
22	Ավազակոպձային շերտ h=10 սմ	մ ³	9.6	3650	35,040.00
23	Միաձույլ բետոն B-20 h=20սմ				
	Ամրանավորում	մ ²	96	11380	1,092,480.00
	- A500C Ø14MM . - 460.8զծմ / 556.65կգ - A500C Ø10MM . - 360զծմ / 221.76կգ				
Շնչամուկ V					201,254,174.74
VI	Ջրընդունիչի կառուցում կմ154+380-կմ154+555 (175զծմ), կմ172+200-կմ172+397 (197զծմ)				
1	Ջրընդունիչ 372զծմ				
2	Ավազակոպձային շերտ h=10սմ	մ ³	26	4200	109,200.00
3	Միաձույլ բետոն B-20	մ ³	44.64	77130	3,443,083.20
4	Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	մ ²	282.72	920	260,102.40
5	Ամրաններ				
	Ø12 A-500C L = 550 մմ	կգ	1090.04	320	348,812.80
	Ø8 Ac-I L = 1000 մմ	կգ	734.71	480	352,660.80
	Ø12 A-500C L = 390 մմ	կգ	1545.97	320	494,710.40
Ø12 A-500C L = 1000 մմ	կգ	1321.34	320	422,828.80	
6	Ցանց				
	L 70x7 L = 1000 մմ . - 744զծմ / 5498.16կգ				
	L 63x6 L = 996 մմ . - 741.02զծմ / 4238.63կգ	կգ	18613.49	590	10,981,959.10
	L 63x6 L = 450 մմ . - 334.8զծմ / 1915.06կգ				
Ø25 A-500C L = 434 մմ . - 1775.93զծմ / 6961.64կգ					
7	10e-IV կարգի բնահողի մշակում ձեռքով կողքի կուտակումով հետադարձ լիցքի համար	մ ³	14.57	3770	54,928.90
8	10e-IV կարգի բնահողի մշակում և բարձումը էքս 0.65մ ³ շտ-ի ա/ի վրա տեղափոխում լցակույտ 10 կմ միջին հեռավորությամբ	մ ³	55.53	1590	88,292.70
9	Շեռադարձ լիցք ձեռքով	մ ³	14.57	1290	18,795.30
10	Մետ. խողովակի Ø273մմ δ=5մմ (ջրանետում ջրընդունիչից) տեղադրում Ջրամեկուսացում (2 շերտ տաք բիտումով)	զծմ	7	28190	197,330.00
11	Գոյություն ունեցող մետ. խողովակի Ø478մմ δ=5մմ ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	94	1180	110,920.00
12	Գոյություն ունեցող 30x34սմ ե/բ վաքերի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	105	1060	111,300.00
13	կմ154+580 և կմ172+190 գոյություն ունեցող ջրընդունիչների մաքրում ձեռքով բարձում ա/ի վրա և տեղափոխում լցակույտ 10 կմ միջին հեռավորությամբ	մ ³	8.8	5340	46,992.00

	կմ172+190 գոյություն ունեցող ջրընդունիչի մետ. ցանցի (3 հատ) ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը :	կգ	146.4	40	5,856.00
14	կմ172+190 գոյություն ունեցող ջրընդունիչի նոր թուջե ցանցի տեղադրումը 67x67 սմ	հատ	3	95720	287,160.00
15	Ջրընդունիչներում կմ154+580 և կմ172+190. նորոգում միաձույլ բետոնով B-20	մ ³	1	52730	52,730.00
16	Մայթի տակից հոսող ջրի ջրանետում գոյ ունեցող ջրընդունիչ կմ154+580. մետ խողովակով Ø150մմ δ=5մմ տեղադրում Ջրամեկուսացում (2 շերտ տար բիտումով)	զծմ	7	11150	78,050.00
Ընդամենը VI					17,465,712.40
VII	Ջրընդունիչ (երթեկային մաս)				
1	Ջրընդունիչի բարձրացում միաձույլ բետոնով B-20	մ ³	3.24	52730	170,845.20
2	Ջրհորի մաքրում ձեռքով. բարձում ա/ի և տեղափոխում լցակույտ 10 կմ միջ. հեռ. վրա	մ ³	10.5	5340	56,070.00
3	Գոյ ունեցող ջրընդունիչների ե/բ սալի և ցանցի ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը (բ. Ստեփանավան և բ. Տաշիր)	հատ	52	860	44,720.00
4	Ե/բ սալ. թուջե ցանցով նոր տեղադրում ջրընդունիչներում (բ. Ստեփանավան և բ. Տաշիր) 1.2 x 1.2 մ 82 x 40 սմ	հատ	27	69410	1,874,070.00
5	Ջրանետում գոյություն ունեցող ջրընդունիչներից մետ. խողովակով Ø219 մմ ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	7	680	4,760.00
6	Ջրանետում գոյություն ունեցող ջրընդունիչներից ա/ց խողովակով Ø250 մմ ապամոնտաժում և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	20	430	8,600.00
7	Ջրանետում գոյություն ունեցող ջրընդունիչներից նոր տեղադրվող մետ. խողովակներով Ø273 մմ δ=5մմ Ջրամեկուսացում (2 շերտ տար բիտումով)	զծմ	40	28190	1,127,600.00
Ընդամենը VII					3,286,665.20
VIII	Դիտահորեր				
1	Դիտահորերի բարձրացում միաձույլ բետոնով B-20	հատ	503	8310	4,179,930.00
2	Դիտահորերի բացակա սալերի տեղադրում . թուջե կափարիչով (իջատեղում) 1.5 x 1.5 մ	հատ	2	89400	178,800.00
3	Դիտահորերի նորոգում միաձույլ բետոնով B - 20	մ ³	8	56860	454,880.00
Ընդամենը VIII					4,813,610.00
IX	Մայթեր				
1	Մուտքերում գոյություն ունեցող թեք դրված բազ եզրաքարերի (15x30)սմ քանդում ձեռքով . պահեստավորում և նույնի տեղադրում - միաձույլ բետոն B-15 1զծմ-0.035 մ ³ - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125 մ ³	զծմ	1464	3310	4,845,840.00
2	Ե/բ եզրաքարի քանդում ձեռքով (15x30x300)սմ և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	92	850	78,200.00
3	Գոյություն ունեցող մուտքերում թեք դրված բազալտե (15x30)սմ եզրաքարերի քանդում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	627	850	532,950.00
3	Մուտքերում նոր բազ եզրաքարերի (15x30)սմ տեղադրում - միաձույլ բետոն B-15 1զծմ-0.035մ ³ - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ ³	զծմ	627	8370	5,247,990.00
4	Գոյություն ունեցող բազալտե 15x30սմ եզրաքարերի քանդում ձեռքով պահեստավորում և նույնի տեղադրում - միաձույլ բետոն B-15 1զծմ-0.035մ ³ - ավազակոպճային շերտ h=5սմ-0.0125մ ³	զծմ	9045	3310	29,938,950.00
5	Գոյություն ունեցող բազալտե եզրաքարերի 15x30սմ քանդում ձեռքով և վերադարձ սեփականատիրոջը	զծմ	3875.93	850	3,294,540.50
